**Կապ մեզ հետ**
Էլ փոստ՝ asea@se.center
Facebook  ASEA - **The Association of Social Enterprises of Armenia**
Կայք՝ www.SE.center

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ASEA

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
L3C
ՍՏԱՐՏԱՓ
HYBRID CAUSE MARKETING
EARNED REVENUE
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻԱՑՈՒՄ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ
BCORP
VENTURE PHILANTHROPY TRIPLE
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ BOTTOM
CONVERGENCE LINE
ՆԵՐԴՐՈՒՄ
ԱԶԴԵՑԻԿ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ

Թափանցիկություն
և տեսանելիություն
Համագործակցություն
Փոխկապակցություն
Ստեղծագործականություն
Նորարարություն
Տեղեկատվություն

## Տեսլական

*Հասարակություն, որն իր տնտեսական գործունեությունը կառուցում է ի շահ համընդհանուր բարօրության*

## Առաքելություն

*Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը՝ սոցիալական ձեռնարկատիրության խթանման միջոցով*

Բիզնեսը Սոցիալականին

# B2S

## Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը

Աշխարհում հայտնի են սոցիալական ձեռնարկատիրության բազում սահմանումներ, տարբերակներ,փորձեր և այլն: Մենք հասկացել ենք մեկ բան, որ սոցիալական ձեռնարկատիրությունը առանձնահատուկ է և պայմանավորված է աշխարհագրական դիրքով, տվյալ երկրի զարգացման փուլով և սոցիալ-տնտեսական աշխուժությամբ: Այն ինչ մենք այսօր շեշտադրում ենք սոցիալական ձեռնարկատիրությունը սահմանելիս, այն է՝ **համայնքի զարգացումը**:



Funded under the EU4Business Initiative of the European Union

Համաֆինանսավորող՝ AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՍՁԱ ՀԿ կազմակերպությունը,
և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԱՐԺԵՔՆԵՐ

Ռազմավարական ուղղություններ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ԱՍՈՑԻԱՑԻԱ

## Ինչպե՞ս ստեղծվեցի

2015 թվականի մայիսի 18-ին Հայաստանի Հանրապետության 5 մարզերի յոթ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ սաղմնավորվեց և հուլիսին Բրիտանական խորհրդի աջակցությամբ ծնունդ առավ «Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան»:

Արդեն օգոստոսի 18-ին այն պետական գրանցում ստացավ: Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան կոչված է համախմբելու և ուղղորդելու բոլոր ջանքերն ու ռեսուրսները, որոնք միտված են նպաստելու Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության կայացմանն ու զարգացմանը:

## Ցանկանում ես դառնալ ՀՍՁԱ անդա՞մ: Ես արդեն ՀՍՁԱ անդամ եմ

· ***Մեր սոցիալական ձեռնարկությունները ստեղծվել և գործում են տարբեր դոնորների աջակցությամբ: Մենք կհամախմբենք նրանց ուժերը և միասին առաջ կմղենք մեր ընդհանուր գաղափարը:***

· **Ես փոխհամագործակցության մոդելով եմ առաջնորդվում:**

· ***Ես ներկայացված եմ Հայաստանի տարբեր մարզերում ու ոլորտներում, և քեզանով ամբողջանում է իմ ներկայացվածությունը ողջ Հայաստանում:***

· **Ես միջազգային ցանցի անդամ եմ և իմ առջև բաց են միջազգային համագործակցության բոլոր դռնե՞րը: Դու նույնպես ինձ հետ ես:**

**Իմ տունը քո տունն է:** Մենք աջակցում ենք միմյանց առկա նյութական ռեսուրսներով:

**Իմ հաճախորդը քո հաճախորդն է:** Մենք համատեղ կկազմակերպենք ու կխթանենք սոցիալական ձեռնարկությունների արտադրանքի վաճառքը:

**Իմ փորձագետը քո փորձագետն է:** Մենք տրամադրում ենք միմյանց փորձագիտական կամ կրթական աջակցություն:

**Իմ իրավապաշտպանը քո իրավապաշտպանն է:** Մենք օգնում ենք միմյանց պաշտպանելու սեփական իրավունքները:

**Իմ դոնորը քո դոնորն է:** Մենք ստեղծում ենք ֆինանսական միջոցների ներգրավման աղբյուրների բազա, որտեղ համագործակցային սկզբունքով կաշխատեն բոլորը:

**Իմ հեղինակությունը քո հեղինակությունն է:** Մենք կառուցում ենք քեզ հետ միասին պրոֆեսիոնալ միջավայր:

**Իմ կապերը քո կապերն են:** Մենք նպաստում ենք ընդլայնելու փոխգործընկերային հարաբերությունները:

**Իմ որոշում կայացնողը քո որոշում կայացնողն է:** Մենք ապահովում ենք շահերի պաշտպանության և լոբբինգի քարոզարշավների կազմակերպումը փոխադարձ հիմունքներով:

**Իմ գրադարանը քո գրադարանն է:** Մենք միասին կարդում ենք, և սովորում, իսկ հետո այդ ամենը ներդնում գործնական քայլերում:

## Սոցիալական ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Նպատակ 1.** **Նպաստել նոր տեխնոլոգիաների և գաղափարների ներդրմանը՝ սոցիալական ձեռնարկությունների զարգացման ոլորտում:**

**Խնդիրներ**
- *Դիտարկել տեղական և միջազգային փորձը*
- *Աջակցել կարողությունների զարգացմանը*
- *Օգնել արդյունավետ շուկայավարմանը*

**Նպատակ 2.** **Նպաստել կառավարման նոր արդյունավետ մեթոդների ներմուծմանը՝ սոցիալական ձեռնարկությունների զարգացման ոլորտում:**

**Խնդիրներ**
- *Դիտարկել միջազգային փորձը՝ տեղայնացման նպատակով*
- *Աջակցել տեղական մասնագետների վերապատրաստման գործընթացին*
- *Ապահովել մեթոդների տարածումը*

## Սոցիալական ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

**Նպատակ 1.** **Նպաստել սոցիալական ձեռնարկատիրության օրենսդրական դաշտին**

**Խնդիրներ**
- *Հետազոտել սոց.ձեռնարկատիրությանն առնչվող իրավական ակտերը քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում*
- *Ապահովել սոցիալական ձեռնարկատիրության գաղափարի ջատագովումը*

**Նպատակ 2.** **Նպաստել սոցիալական ձեռնարկատիրության դերակատարների իրավունքների/շահերի պաշտպանությանը և գենդերային հավասարությանը**

**Խնդիրներ**
- *Ձևավորել սոցիալական ձեռնարկատիրության հաշտարարի ինստիտուտը*
- *Աջակցել սոցիալական ձեռնարկությունների ստեղծմանը, կայացմանը և ձեռնարկատերերի իրավունքների պաշտպանությանը*
- *Աջակցել խոցելի խմբերի մասնագիտական ուսուցմանը և գենդերային հավասարությանը՝ զբաղվածության ապահովման նպատակով*

## Սոցիալական ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Նպատակ 1.** **Նպաստել սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում միջազգային և տեղական համագործակցության կայացմանը**

**Խնդիրներ**
- *Աջակցել սոցիալական ձեռնարկությունների ցանցային համագործակցությանը*
- *Ապահովել սոցիալական ձեռնարկությունների և այլ կառույցների (պետական կառավարման մարմիններ, քաղաքացիական հասարակության կառույցներ, զանգվածային լրատվամիջոցներ, դոնոր հանրության, կրթական հաստատությունների) փոխհամագործակցությունը*
- *Խթանել սոցիալական ձեռնարկատիրության միջազգային համագործակցությանը*

## Սոցիալական ԱՐԺԵՔՆԵՐ

**Նպատակ 1.** **Նպաստել սոցիալական ձեռներեցության արժեհամակարգի ձևավորմանը և տարածմանը:**

**Խնդիրներ**
- *Տարածել սոցիալական ձեռնարկատիրության գաղափարը Հայաստանի Հանրապետությունում կրթության միջոցով*
- *Ձևավորել միջմշակութային հարաբերություններ և նպաստավոր միջավայր*
- *Ձևավորել արդյունավետ համագործակցություն և սոցիալական վարքագիծ*

**Հանձնաժողովներ՝ ըստ ուղղությունների**

“ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ”
“ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ”
“ԱՐԺԵՔՆԵՐ”
“ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ”

**Հանձնաժողովներ՝ ըստ կազմակերպական կառուցվածքի**

“Հանրային կապերի”
“Ֆինանսական ռեսուրսների կառավարման”
“Մարդկայնին ռեսուրսների կառավարման”
“Ծառայությունների մատուցման և ֆոնդահայթայթման”